

Սրտամկանի վնասումը, միոկարդիտը և սուր կորոնար համախտանիշը COVID-19-ի ժամանակ

Սրտամկանի վնասումը, որը բնորոշվում է բարձր տրոպոնինի մակարդակով, կարող է առաջանալ սրտամկանի իշեմիայի կամ սրտամկանի ոչ իշեմիկ վնասման հետևանքով (միոկարդիտ):

Սուր շնչառական ինֆեկցիայի և հիպօքսիայի պարագայում, հատկապես, երբ առկա է սուր ռեսպիրատոր դիսթրես համախտանիշ (ARDS), սրտամկանի վնասման հավանականությունը մեծանում է:

Բարձր տրոպոնինի մակարդակ նկարագրվել է COVID-19-ով բազմաթիվ պացիենտների մոտ: Մահացած և առողջացած պացիենտների մոտ տրոպոնինի մակարդակները եղել են տարբեր: Չորս հետազոտություն ընդգրկող մետասանալիզը ցույց է տվել, որ սրտային տրոպոնին I-ի ստանդարտացված միջին տարբերությունը 341 պացիենտների մոտ նշանակալի բարձր է եղել COVID-19-ի արտահայտված հիվանդության պարագայում համեմատած ոչ արտահայտված կլինիկա ունեցող պացիենտների հետ (25.6, 95% CI 6.8-44.5): Սրտամկանի սուր վնասման ժամանակ դիտվում են ԷՍԳ և Էխոսրտագրային փոփոխություններ (այս պացիենտներն ունեն ավելի ծանր հիվանդության ընթացք և պրոգնոզ): Չինաստանում հոսպիտալիզացված հիվանդների կոհորտ հետազոտությունները ցույց են տվել, որ սրտամկանի նման վնասում առաջանում է 7-17% հոսպիտալիզացված հիվանդների մոտ: Սրտամկանի սուր վնասումը ստատիստիկորեն նշանակալի տարբերությամբ ավելի հաճախ դիտվել է ԻԹԲ ընդունված հիվանդների (22.2% vs 2%, $p < 0.001$) և մահացած հիվանդների մոտ (59% vs 1%, $p < 0.0001$):

Driggin E, Madhavan MV, Bikdeli B, Chuich T, Laracy J, Bondi-Zoccai G, Brown TS, Nigoghossian CD, Zidar DA, Haythe J, Brodie D, Beckman JA, Kirtane AJ, Stone GW, Krumholz HM, Parikh SA, Cardiovascular Considerations for Patients, Health Care Workers, and Health Systems During the Coronavirus Disease 2019 (COVID-19) Pandemic, *Journal of the American College of Cardiology* (2020), doi: <https://doi.org/10.1016/j.jacc.2020.03.031>.